

1598

Zby & Sonographs

809

4-29

02 JUN 2005

ԿԱՐԱ-ԴԱՐԻՒՅՑ  
12 OCT 2009

# ԻՆՉ Ե ՖՈՒԹՈՒՐԻԶՄԸ

ԹՈՎԱՆԴԱՍՆՈՒԹՅԻՆ

Սայեաթ-Նօվալիս դէպի ֆութուրիզմ.—Մարինեաթին՝ Մուկւայում.՝ Ֆութուրիստների ձգտումները հտալիայում.՝ հտալական ֆութուրիստների ձգտումները գեղարվեստի մէջ.—Ֆութուրիստների վեւարելմանքը դէպի պատերազմը և կինը.՝ Բազմապատկեած մարդը և մեքենայի թագաւորութիւնը.՝ Ֆութուրիստները և սիմուլիստները.—Նիցշէն և ֆութուրիստական նկարչութիւնը.՝ Ֆութուրիստական երաժշտութիւնը.՝ Վերջին խօսք:

ՏԵՍ. 20. 19

809

4-29

ԱՅ.

ԿԱՐԱ-ԴԱՐԻԵՑ

ԻՆՉԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՓՈՒԹՈՒԹԻԶՄԸ

100  
88  
4

808



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԱԿԱՐԴ-ՄՊԱՀ

Ե Յ Մ Բ  
ՊԱՀԱՊԱԹԱՅԻՓ



ՔԻՑԼԻՇ

Ֆիզարան և ՊՈԽԱԱ Մուղեսկի պետու. № 3

1914

առաջ կառ մեռք չ մուազալ ամճարք ցիւոցաբբ  
ար որ այ վէ պահանդիմակարգական մախաց  
արքանուն և պահանդիմակարգ ուրիշն չ եւուիդ  
չեն և առ այ պահանդիմակարգ ըստ մասն

պահանդիմակարգ նուերն չն  
նացածնան և մասն պահանդիմակարգ ըստ

**ՍԱՅԵԱԹ-ՆՕՎ-Ս. Ց. Գ. Պ. ԽՈԽՈՒԹՈՒՐԻ ՁՄ**  
յէ յոյժերայ դմացասու դրմացու ուս ցըդ

3 Նոր գաղափարներ, նոր զգացումներ առաջ  
են եկել ամեն էպօխաներում և ամեն աղբերի  
մէջ, գլխաւորապէս բարձր կուտուրայի հասած  
աղբերի մէջ Յետամնաց աղբերը միշտ աւելի  
պահպանողական են և հին տրագիցիաներին ու  
սովորութիւններին ամուր կպած, քան լուսաւոր  
և քաղաքակիրթ աղբերը:

Եւ զարմանալի չէ, որքան տգէտ, խա-  
ւար և յետամնաց է մի աղդ, այնքան նա կատա-  
դի և ֆանատիկոս է իր մաքառման մէջ նոր գա-  
ղափարների, նոր զգացումների և առհասարակ  
նորմուծութիւնների դէմ:

Ժողովրդների փիլիսոփայական աշխարհա-  
հայեացքը, ճաշակը և սովոր զգացումների փոփո-  
խութիւնը հեշտութեամբ չէ կատարւում - գորեղ  
պայքարի և ուժեղ կուի առաջ է, որ տեղի է տա-  
միս ամեն ինչը, որ հին է, մաշտած է և անուժ:

Ապրելու տեհնչը և գոյւթիւն ունենալու

զգացումը, կարծես, յարաւակ է նոյն իսկ վերացական հասկացողութիւնների մէջ, չէ՞ որ դա բղխում է մարդու զգացումների և մտածողութեան աշխարհից, իսկ միտքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սեղմւած զգացմունք:

Բայց որքան կեանքը խղճուկ և ճահճացած կը լինէր, եթէ ժամանակ առ ժամանակ նոր մըտքերը, նոր յուզումները հոսանքներ կազմելով չը գային, չը թարմացնէին մարդկանց կեանքը, չը առողջացնէին մարդկանց ապրումները:

Ահա ձեզ ասիական անշարժ և կեանքի յառաջադէմ ընթացքից յետ մնացած ազգերը—մըրքան միակերպ և ճահճացած է նրանց կեանքը:

Իրաւ է գոյների սիրահարների մէջ գուցէ և այդօրինակ կեանքի մէջ էլ գտնւեն բանաստեղծական մօտիւներ, ստիլիզացիայի համար թերես և այդօրինակ կեանքի մէջ էլ լինեն էլեմենտներ որոշ կուլտուրայի երեսը (լուս) ցոյց տալու, գուրս բերկու համար, բայց որքան այդ կուլտուրան իր թէկուզ էթնոգրաֆիական մեծ հետաքրքրութիւն ներկայացնող ստիլիզացիայով օգտակար և բարենպատակ է մարդկանց կեանքը բարելաւելու համար—դա հարց է:

Եւ գրա լուծման համար մարդարէ, հարկաւոր չէ լինել:

Այնտեղ, ուր չարժում, յառաջադիմութիւն

չըկայ, այնտեղ երբէք էլ չի կարող կեանքը նուրոգւել, կեանքի պայմանները լաւանալ, մարդկանց վիճակը բարւոքւել:

Աւելի պարզելու համար հարցը, դառնանք օրինակների:

Յետամնաց ազգերը անշուշտ հակառակ հնւուսաւորութեան, ապա ուրեմն գիտութեան:

Գիտութիւն ասելով պիտի հասկանալ անպիսի գիտութիւն, որ կեանքը և նրանց սոցիալական պայմանները գնում է յառաջուն նորոգման և յառաջ մղող ուղիների վրայ:

Մեր թեմական և ծխական գպրոցներումն էլ աւանդում է գիտութիւն, բայց ինչ գիտութիւն է—թող ինքը կեանքը վկայէ,

Մի գիտութիւն, որի ճաշակող սաները լըցնուս են մեր տիբացու և սեմինարիստ ինտելիգենցիայի շարքերը:

Աւելի լաւ անուն, քան «ծխական ինտելիգենցիա», որ տւեց մեր նորագոյն բանաստեղծներից մէկը, չէր կարող լինել:

Գիտութիւնը փոփոխելով մարդկային կեանքի տեխնիքական-արտաքին կողմը, գրա հետ փոփոխում է և մարդկանց հասկացողութիւնները մարդկանց և նրանց վարած կեանքի վերաբերմաբ:

Մի եղունգ մաքրելը և գլուխը ոջլով չըպա-

հելը շատ աւելի կենսատու գիտութիւն է, քան  
հայ սեմինարիստական խիմիան և ֆիզիքան:

Բայց այդպիսի փոքր բաների վրայ միթէ  
ուշադրութիւն կըդարձնեն մեր մանկավարժնե-  
րը, մանաւանդ գերմանական «տոգան» վրան  
գցած դոքտոր մանկավարժները:

Հետաքրքրական է, որտեղ մարդիկ աւելի  
ճնշած են, ստրուկ են և աւելի վատ պայմաննե-  
րի մէջ են ապրում, եթէ ոչ աւելի յետամասց  
ազգերի և երկրների մէջ:

Իսկական կուլտուրան և գիտութիւնը ամենից  
առաջ ծառայում է մարդուն երջանկացնելու հար-  
ցին:

Եւ բոլոր այն մանր ու խռով նւաճումնե-  
րը, որ արել է և անում է գիտութիւնը ծառա-  
յում են մարդու կեանքը աւելի լաւսպոյն պայ-  
մանների մէջ գնելու գործին, նպատակին:

Մարդիկ մեծ մասամբ դժկամակութեամբ և  
շատ անգամ նոյնիսկ թշնամաբար ին վերաբեր-  
ում ամեն մի նորութեան կամ նորմուծութեան,  
կեանքի ինչ մթնոլորդում էլ դա լինի  
Այսուղի, ի հարկէ, մեծ դեր է կատարում մո-  
ւալլ:

Ինչպէս յայտնի է ուստ ֆութուրիստների  
աւելի երիտասարդ մի քանի ներկայացուցիչնե-  
րը, գլխաւոպապէս նկարիչները ներկում են ի-

րանց երեսները, այսինքն իրանց երեսների և  
ճակատի վրայ նկարում են զանազան նկարներ  
(ծաղիկ, կենդանի և այլն):

Երիտասարդութիւնը իր դաւանած մկրդ-  
բունքների և հաւատի մէջ միշտ բուռն և ան-  
զուսպ է եղել և յինելու է, և այդպիսի մի անմեղ  
վարմունքի վրայ կարելի է նայել միմիշան ինչ-  
պէս մի չարութեան (առօստե) վրայ, ինչպէս և  
նոչակառը ֆութուրիստ զիտնական ուսուցչա-  
պետ Կուլինը ասում է իր դասախոսութիւնների  
մէջ, որ զրա մէջը չէ ֆութուրիզմը և այդօրինակ  
բաներին պէտք է ներողապտութեամբ վերաբերել:

Բայց արի տես, որ դա այնքան էլ ճիշտ  
չէ—ին մորալը օծի նման շարժում է մարդ-  
կանց քարացած հասկացողութիւնների մէջ:

Այսպէս մի ինտելիգենտ և նոյնիսկ յայտնի  
դերասանուհի յուղւած, ջերմախտով բռնւածի նը-  
ման կարմրած երեսով և երեսի վրայ կապոյտ  
պարանների նման գուրս ցցւած ջղերով ապա-  
ցուցանում էր, որ ֆութուրիստների վարմունքը—  
ներկել իրանց երեսները—մի վերին պստիճանի  
բարքերը կազմալուծող յիմարութիւն է: Դա իս-  
կական գիղալւեստ չէ, դա զգելի շարլատանու-  
թիւն է, պոռում էր տաքացած դերասանուին,  
երեկ իր ներսը պաշտպանելով ընդունեած, նա-  
նազնած իր գեղարւեստը:

Ես այդ ըովէին չըկարողացայ ինքս ինձ  
դսպել, և պարդ ի պարզով ասացի, — իսկ ինչու  
ձեր երեսը ներկւած է և քսւած (տիկինը շպար-  
ւած էր):

Տիկինը մի փոքր ինչ յուղեց և ինքն իրան  
զսպերով ասաց, — դա ընդունեած է:

— Այս, դա ամենալաւ պատասխանն է, ո-  
րին ես սպասում էի, դա ձեր մորալն է, ասացի,  
կեանքի որոշ պայմանները և նստւածքը (յ՛  
լած) ստեղծում է իր ժամանակի ընթացքում և իր  
մորալը, որը արիւն և մարմին է դառնում մարդ-  
կանց ներքին ապրումներին համար և ահա այդ է  
պատճառը, երբ մարդկանց կեանքը դալիս է մի  
նոր հրումն (ԸՃՎԻՐԵ), մի նոր շարժում առաջա-  
ցնելու համար, իսկոյն մարդիկ լարւում են և  
հակապղեցութեան զգացմունքով բռնւում, վա-  
խենալով իրենց կեանքի նստւածքը շարժումի չը  
բերել, իսուն ի խուռն չը դարձնել կանոնաւոր-  
ւած կեանքը, իրանց սովոր էստետիկական և  
այլ ճաշակները:

Դա դարաւոր կեանքի նստւածքն է, որ բո-  
ղքում է, դա և դարաւոր կազմակերպւած մո-  
րալն է, որ ըմբռոստանում է նոր գաղափարների,  
նորմուծութիւնների դէմ, առաջացնելով հոգեկան  
յուղումներ և տանջանքներ:

Նամանաւանդ այդ ներքին դրաման զօրեղ

է լինում մտաւոր ցած աստիճանի վրայ կանգ-  
նած մարդկանց համար, կուլտուրայի ստորին  
աստիճանի վրայ մնացած խաւարամիտ ազգերի  
համար:

Օրինակ ձեղ նախկին նահապետական ըն-  
տանիքը — ծնողները:

Որքան դրամաներ գիտենք մենք այդ աշ-  
խարհից, երբ որդին կամ աղջիկը — մի խօսքով —  
զաւակները Հակառակ հն գնացել հնաւանդ սո-  
վորութիւններին, ձեերին և կարգերին: Եղել են  
ողբերգական հետևանքներ, երբ որդին կամ աղ-  
ջիկը հակառակ իր ծնողի ցանկութիւնն, տարւե-  
րով իր ներքին ձայնին, գնացել է իր սիրածի  
յետելից:

Այստեղ զարհութելի բողոք կայ ինքնու-  
րոյնութեան գէմ և մաքառում ինքնուրոյնութեան  
համար:

Ինքնուրոյնութիւն — ահա ինչը անհատները  
և կեանքը մեծ պայքարով են ձեռք բերում և  
պոկելով են խլում ամրացած, նստած կեան-  
քից:

Մի փոքրիկ ուժգին խփող առուն աւելի  
լաւ է, քան միապաղաղ և լայնածաւալ հոտած  
ձահճար: Այդպէս է և կեանքը, նրա մի փոքրիկ  
շարժուն առողջ պատառը աւելի կենարար է,  
քան միապաղաղ լայնածաւալ կեանքի ծովը, որը

մեծ է իր տարածութեամբ և փոքրիր անշարժ ու կանգուն խորութեամբ:

Ահա այդպէս զօրեղ է մորալը, որ շատ անգամ պատճառ է դառել տնտեսական և բարոյական քայլայման, առաջացնելով կազմալուծութիւն երկու ընդհարուղ հասկացողութիւնների, աշխարհայեցողութիւնների մէջ — ին, արդէն ընդունւած, սրբացրւած և նոր մորալի մէջ:

Զանազան ազգերի, երկրների պատմութեան ընթացքում, ի հարկէ, եղել են մոմենտներ, երբ նոր գաղափարների յախուռն ընթացքը եկել, վրայ է հասել և շատ անգամ նոյնիսկ վանդալական թափով ջարդ ու փշուր է արել ուղար նախկին կուլտուրայի ստացւածքը ու գանձումները:

Ի հարկէ, այդորինակ նոր գաղափարների յախուռն ընթացքը սկզբում մեծ իրարանցում և գժգոհութիւն կարող է առաջ բերել և հակազդեցութիւն հնաւանդների շարքերս մ, բայց նոր գաղափարները, նոր հասկացողութիւնները հետըզնետէ նւաճումներ անելով նստում, ամրանում են կեանքի մէջ և նոր մորալի, նոր կեանքի հիմարքար դառնում:

Նոյն պատմական երևոյթը կատարւում է և գեղարւեստական աշխարհում. Նովատորութիւնը, գեղարւեստական նոր շկոլաները հեշտու-

թեամբ չեն, որ տեղ են գտնում մեր կեանքում և ուժեղ պայքարի տակ, և հալածանքների մթին անտառների միջով է, որ անցնում, զալիս և յետ են մզում հնացած գեղարւեստական ձևերը, ճաշշակները: ~~X~~

Մի այդպիսի պայքարի մէջ և հալածանքի մթին անտառի միջով է, որ անցնում է այժմ նէօ—գեղարւեստը, որին տալիս են Ֆուրսուրիզմ անունը,

Շատ ուշագրաւ է այդ գեղարւեստական հոսանքի մասին հոչակաւոր ոռու քննադատ և գեղարւեստագէտ Ալէքսանդր Բէնուայի կարծիքը:

Ահա թէ ինչ է նա ասում. — «Ես բոլորովին համոզւած եմ, որ վերջին իսկական հոռվմայեցիները և յոյները պիտի զգային նոյն բանը, ինչ որ մինք ենք այժմ զգում: Նրանք տարակուսանքի մէջ էին լնկնում, տեսնելով թէ ինչպէս ամբողջ աշխարհը նրանց շուրջը՝ կործանւում է, ինչպէս գաղտագողի (ոճովութեան) ոյժերը փոս են փորում ամեն ինչի, ինչ որ ամենագեղեցիկն է, իմաստումն և սրբազնն:

Տարւէ-տարի գայրոյթի հուրը մարում էր այդ վանդակների գէմ և տարւէ-տարի աճում էր հետաքրքրութիւնը դէպի ինչ որ նոր, բոլորովին օտար և տարօրինակ բողբոջները:

Անհեթեթութիւններ, անշառշատ, պիտի ասէ-

ին, և այն ժամանակւայ Բուրլիւկները (Փութուրիստ), և այնուամենայն իւ ականջ էին դնում այդ անհեթեթիւններին, որովհետև Նրանց տակը թագնաւծէ էր միծ: ռւղղակի տարրերային ոյժ:

Իհարկէ այն ժամանակւայ Բուրլիւկները (Անդապատրդները) անհետ կորանց բայց արդեօք Նրանք չըհասցըթն միզ այն բանին, որ այժմ մինք: Կրչում ենք պիտանդական զեղարւեստ, և որով մենք այժմ ընդունակ ենք զմայլել, սքանչանար:

Արդեօք Նրանց շնորհիւ չէ, որ այժմ փոխւած է աշխարհի երեսը (լուկъ) և եթէ կորցրել է իր հիանալի պարզութիւնը, այնուամենայնիւ աւսլի խորը և նշանակալից է դարձել:

Ահա այս տողերից պարզ կարելի է եղրած կացնել, որ նոյն իսկ Աս Թենուայի նման գեղարւեստագէտը և քննադատը շինթխտում նովատորութիւնը, թող որ դա լինի դեռ բոլորովին, անկազմակերպ և որոնումների շրջանում գտնած դուս Փութուրիզմը:

Մի այլ տեղ նոյն Բենուան ասում է խորհրդաւոր և ռւշագրաւ խօսքեր, որոնց առաջ բերելը նամանաւանդ կարևոր եմ համարում հարցի պարզման, համարւած:

Ահա այդ խօսքերը — «Խոստովանում եմ ինձ պակասում է համոզում զայրոյթով դուրս

գալու և խաչակրաց արշաւանք յայտարարելու Նրանց (Փութուրիստների) դէմ ժամանակակից, դրանք անուն են ու վանդակներ են, բայց դա գուցէ և լաւ է, որ անուն են և վանդակներ: Թող իրենց համար աշխատեն ամեն ինչի, ինչ գոյութիւն ունի, կործանման վրայ և ein neues Leben wird aus den Ruinen blühen — Մի նոր կեանքը ծաղկում է վլատակների միջից:

Նրանց ստեղծագործութիւնը անձամբ ինձ հարկաւոր չէ — նա մեր հասկացողութեամբ հաշմանդամ և վատ է: Բայց այն յուզումը, որ նըրանք մացնում են մեր էստեթիկական կեանքը օգտակածը է և կարող է մի որևէ տեղ հասցնել և յամենայն դէպս տանել:

Կուլտուրայի ամբողջ միտքը չը կամզելու մէջն է կայանում: Հարկաւոր է յառաջել և չը կանգնել:

Թուրիվկը և Նրա նմանները մղում են, անհանգմտանում են, յուզում են, խոռվութիւնը են մտցնում և թոյլ չեն տալիս լճանալու: Բայց Նրանք չը գիտեն իսկապէս, ինչի համար է այդ բոլորը: մենք ել այդ չը գիտենք:

Նրանք շատ կարելի է, անհամապէս, իրաւ, ոչինչ չեն անում, բայց քինչ որ բանի արթում է, կատարում է, և այդ նորը արտայայտում է

սարօրինակ, բայց անխուսափելի, և օգտակար  
ջղագութիւնների մէջ»:

Ահա այստեղ ևս, մի ապացոյց Ալ, թէնուա-  
յի բերանով ասւած, որ նորութիւնը և առասաւ-  
րակ նովագորութիւնը յուզում, չարժում, թար-  
մացնում է ոչ միայն մեր էստետիկական ճաշա-  
կը, այլև նոյն իսկ մեր առօրեայ կեանքը, չէ որ  
կեանքն էլ փոխում է մեր ճաշակների և հաս-  
կացողութիւնների համեմատ:

Ահա ձեզ երեք մարդ նստած խօսում են և  
ահա նրանք էլ ստեղծում են մի կտոր կեանք:  
Կեանքը — մթնոլորդը ստեղծողը իրանք մարդիկն  
են, — որպիսի մարդիկ, այնպիսի և մթնոլորդ  
ինչպիսի մարդիկ են, այնպէս էլ կը լինի նրանց  
ստեղծած կեանքը — մթնոլորդը:

+ Նովատորութիւնը գրականութիւն և գե-  
ղարեստի մէջ մեծ դեր է կատարում: Նովատո-  
րութիւնը, ինչպէս տեսանք, յուզում, խռովու-  
թիւն է առաջ բերում մեր մտաւոր և հոգեկան աշ-  
խարհում, ապա ուրեմն հնարաւորութիւն չէ տա-  
լիս կանգնելու, ճահճանալու:

Մի այդպիսի յուզում և խռովութիւն է ա-  
ռաջ բերել այսօր Փութուրիդմը կամ ճիշտ ասած  
նէօգեղարեստը ուստական գրական-գեղարես-  
տական աշխարհում:

Եւ զարմանալի է՝ մենք էլ ունենք գրակա-

նութիւն և գեղարեստ իբր թէ, բայց նա միշտ  
հնաւանդների և փոշակալածների կողմից պահ-  
պանուել է արտաքին «վնասակար» ազդեցութիւն-  
ներից: Խոշոր դեր է կատարել այդ դէպքում մեր  
տոքտ և տիրացւալան մամուլը, որ միշտ ընդ-  
դիմադիր այժ է հղել նոր հոսանքների դէմ և ա-  
մեն մի ծիլ, բողոք, նորագոյն գրական հոսան-  
քի կամ ազդեցութիւն աազմում իսկ խեղդել է,  
իր կը քիչն սեղմած պահելով և զարգացնելով իր  
միջնադարեան ամատեանների բորբոսնած փոշե-  
կագմերը:

Ցիշում հմ, երբ մի 8—10 տարի առաջ մո-  
դերնիզմը — սիմոլիզմը երերուն և անվստահ քայ-  
լերով մուտ էր գործում մեր գրականութիւնը, և  
ինչպէս մեր քննադատներից մէկը հարայ էր  
կանչում, թէ հայ գրականութիւնը այլասեռում  
է, և մեր մեշչան, տիրացու ինտելիգենցիան իս-  
կոյն երես դարձեց գրականութիւն, նորագոյն  
«երեսից», բանի որ գրական նոր հոսանքի ներ-  
կայացուցիչները գոյութիւն ունեցած մեծ կու-  
սակցութիւններից ոչ մէկին չէին պատկանում և  
գոյութիւն ունեցած երկու մեծ թերթերի մէջ  
չէին աշխատակցում, իսկ չէ որ մեզանում մին-  
չև այժմ անդրդեկի սիրիական համոզում է տի-  
րում, որ բոլոր «տաղանդները» և «պատրաստ-  
ւած» մարդիկ գտնուում են միմիայն գոյութիւն

ունեցող երկու օրաթերթերի մէջ „Մշակի“ և  
„Հորիզոնի“ մէջ, իսկ այդ երկու մեծ թերթերից  
գույքը արտայատուղները ոչ գրող են, և ոչ տա-  
ղանդ:

Սյժմ կուսակցական սիրիաների մէջ խառնւելով և ժամանակին ժպտալու արւեստը հրացնելով կարելի է տաղանդ հռչակել և զրոյի անուն վաստակել, քիչ է այդ և կհանքում ամենահամեղ գաթաները անուշ անել:

Եւ որբան դա ձեռնտու արւեստ չը լինի գրական էկւրիթրիստիկա և ճկունութիւն ձեռքիք րածների համար, բայց այնուամենայնիւ գրականութիւնը և գեղարւեստը ունի իր բնական ուղին և պահանջները, որոնց չըգոհացնելու դէպքում թօջնում, թառամում է և հիւծում առողջ միաքը և խսկական գեղարւեստը:

Եւ այսօր հայ միտքը հիւծւած է, հայ գեղարւեստը թօշնած, որովհետեւ ժամանակին ժը պիտներբ “և սիրիսիների” հոգերանութեան յարմարելը բաւարար չի կարողանում լինել զարթեցնելու հայկական նոր-թարմ միտքը և առաջացնելու համական ։

Եցամիւ հայկական նոր գեղարվեստը, Եւ այդ է պատճառը, որ մեր կեանքը մի նեխած, հոտած ճահիճ է դառել, որի երեսը մի կանաչած շերտ է կանգնած և որը հեռէից եկողին—անձանօթին կանաչազարդ մարդագետին է

երեսում և բաւական է ոտները կոխի խարռութել  
արօտամարդի վրայ, որ խրւի, սուզւի և խեղդւի  
միամիտ անձանօք:

Եւ արթնացած գորտերի զարհուրելի կռոռ  
ցը աշխարհ լցնելով, խեղղում է անձաւօքի թոյլ  
օդնութեան կանչող ձայնը անդամ:

Եւ այդ իմանալով հանդերձ նորագոյն գրա-  
կանութեան անծանօթը չը պիտի խաբւի հորի-  
զոնի կանաչազարդ «մարդագետնից», այլ զնայ-  
դէպի անծանօթ հորիզոններ և այլ վայրերում  
փնտռի իր մարդագետինը, որի արօտը թէ կուզ  
առաջին բռղբոջները լինեն, գոնէ հոտած ճահճի  
կանաչը չեն լինի:

Հայ կեանքը այսքան նեխւած է և ճահճացած, որ հայ միտքը մի անհիւթ և քամ ւած ծամօն է դարձել։ Հրապարակում տաղանդաւրութիւնը և ինքնուրոյն մտածողութիւնը հալածւած է և բանալ մտքերը ե բանալ զգացումները այսօր դարձել են հայ լառաջադիմութեան լօգունգ։

Եւ զարմանալի է, որ այդ այդպէս է, եթէ  
նոյնիսկ հայ գրողների ընկերութեան բանաստեղծ-  
նախազանց կարողանում է ամբողջ մի գիշեւ  
զբաղեցնել այն հարցավ որ այսու Սայեաթ-Նօվան  
եպիսկոպոս էր թէ վրահանքակար կ երկար ու բա-  
րակ գլուխ աշխատ էր Կահինամայ ու ի կարողանում

Աշտիւապարզել այդ գրական խողոք համցը, ու  
 դիմ կը թէ էլ զարմանալի չէ, որ հայ գրակա-  
 նութիւնը դառել է մի ճահիճ և կարօտ է ի իր-  
 դասի Բարձրին կների; որ դաս ուշաջթեն այդ հո-  
 տած չափանիք թէ կուզ; իրանք շնչառան լինեն  
 այդ բուրաստանի առօնանտից: Եւ առ առ առ  
 առ Վերջին երկու երեք տարիները որոշ գրա-  
 կան իմբակ; և թիվ գլուխ աֆցաւ հայ գրական  
 ընկերութիւնը ջանք ու ճիդ թափնջ մեր դրան  
 կանութեան մէջ աշուղական նոսանք անաջ թե-  
 րել և փրբէ լոգունդ աշուղական գրականութեան  
 պատաժ մղեց ԽVIII դարուն աշուղ Սայեաթւնօվայի  
 լիրիքական բնոյթ ունեցող բանաստեղծութիւն  
 ները որոնք թէ իրանց լիզով և թէ իր ժա-  
 մանակի ոտանաւորների կազմութեամբ ամենաա-  
 շատը կարող են ազգագրական հնութիւն և հե-  
 աաքը թիւն ներկայացնել և ոչ այժմեան մեր  
 օրերի գրական հոսանքի հիմնաքարը դառնալ,  
 երբ այսնքան հայի, նամանապնդ քաղաքի հայի  
 հոգեբանութիւնը բոլորովին այլ է, քան երկու  
 դար առաջ հայի հոգեբանութիւնը՝ Այդ դէպքում  
 բոլորին ինչ էլ զարմանալի չեն երբ այժմեան մե-  
 րունդը պահանջներին լինի թիւ կեանքի երգիչնե-  
 րին և շանկայ ունենալ իր գրականութիւնը և  
 գեղարւեստը և չը տարւի ԽVIII դարուն աշուղա-  
 կան նէյնիմերով:

Հզօրագոյն գարգացած է հայսօր քաղաքի  
 կեանքը և հայ ժողովուրդը իր սուարագոյն մե-  
 ծամասնութեամբ ապրում է մեծ տեխնիկական  
 և արդիւնաբերական հրաշքների գաղաքներում  
 (Թիֆլիս, Բագուշ, Արտավազ, Մուսկու, Պոլիս, Ա-  
 ղէքանանդրիա, Քահիճի), Ամերիկայի քաղաքներում  
 և այլն); Գիւղի կեանքն էլ մեծ քաղաքների յետեից  
 զնալով հետպհատէ փոշիանում է քաղաքի ինդո-  
 առըիան և հոն մոզա գործելով, պարզաէ, որ  
 այժմեան մարդու համար պահանջւում է այլ  
 գրականութիւն, այլ գեղարւեստ իր համապա-  
 տասխանող մտորումներով, որ խօսեիս լինի  
 այժմեան մարդու հովանութիւնը և մաքի հետ, և ոչ սպե-  
 ցիքի հայի ըոմանտիկական հովերով ըոնւած  
 գրականութիւն, որի շահագործողն են հանդիսա-  
 նում այժմեան կեանքը պահանջներից յետ մնա-  
 ցած և այժմեան պահանջներին բաւարարութիւն  
 տալու անզօր գրական մշակները:

Այնապէս կեանքն է և նա յօդս  
 կը ցնաի այդ արհեստական երկունքները (պու-  
 դու) և գրականութիւնն ու գեղարքեստը կը գնի  
 ընական և իրական ուղիների գրայի և այդ գրա-  
 կան հոսանքի ուղիների առաջին սիմվոլներն  
 են մեր գրական կեանքում եկած անհատական  
 վերաբրութիւն, արտայայտութիւնները, որնք  
 բիրուցի են նորչգրականութիւն և նոր գեղարւեստ

իր նոր և ալժմեան սերունդի համար։  
Հարցեր, հարցեր և հարցեր, որոնք անտառի հազարաւոր ծառերի նման գալիս և մեր առաջն են կանգնում; բայց գառնանք մեր հարցին ֆութուրի զմին և պարզենք ինչ է Փութուրիդը, որը մեր գրական Խիկար իմաստունները չըմբռնեղվ, շարունակ բացատրում են անորմալութեամբ, թէև այժմ չափազանց գրական նորմալութիւնն էլ առողջ դգումից այն կողմը չեւ անցնում։

## ՄԱՐԻՆԵՑԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Մարինետին Մոսկվայում եղած ժամանակ իր դասախոսութիւններին, ինչպէս լրագիրներից գիտենք, ունեցաւ աղմկալից յաջողութիւն, թէև ուսու Փութուրիստները վերաբերեցան դէպի նա բնլրովին բացասաբար, բաւական է յիշել այստեղ Փութուրիստների ամենատիպիկ ներկայացուցիչներից մէկի՝ նկարիչ Լարիոնովի լրագրում տպած նամակը, ուր նա՝ Մարինետին անւանում է անհամ ու զուեհիկ, իսկ նրա բարոզածը անհերերութիւն, եւ այդ էր գուցէ պատճառը, որ նա դուր եկաւ մեծամասնութեան, որ նա գտաւ իր և իր առողիտորիայի մէջ մի ընդհա-

նուր լեզու, որով հասկացան նրան։ Իրաւոր գաքանալութեան նշան պիտի համարել, քանի որ նոր գեղարւեստի և հոսանքի առաքեալլը՝ նովատորը առ միշտ պատմականօրէն զրգուել է ընդհանուրի ճաշակը և հասկացողութիւնը։ Նովատորի և մասսայի աշխարհահայեցողութիւնների մէջ շիման առաջ գալլ անխուսափելի է և իսկական գեղարք և ստը քչերն են հասկանում, քչերին է մատչելի։ Մարինետին և այդ դէպքում աւելի քաղաքականագէտ գունեցցաւ։

Նա, իր դասախոսութիւնների մէջ կոչ չարաւ պատերազմի կուլտի մասին, ինչպէս հոգֆապար գիգինա աշխարհի, նաև չըհամարձակւեց խօսելու ծոլսութեան վախկոտութեան (դրասուստ) մասին, վերջապէս նաև մոռացաւ արտայայտելու իր արհամարհանը դէպի կինը և իր գծեխանիկական որդուաց ցնորքը։

Նա խօսեց ժողովրդների առողջ ինստինկտների մասին, որը պոկւում, առաջ է ուղղում անցներել հակառակ երկրի անշարժ ուժերի։ Նա խօսում էր, ցեղերի արժանիքների մասին և դա կըում էր արիութեան նոթեր և միենոյն ժամանակ անսպասելի էր։ Նա խօսում էր, մուղեյական ստըրկուկան հետևողականութեան մասին և չոր գըրքականութեան (книжность) մասին։ Վերջապէս ասում էր նա, ամեն մի հոսանքի յաղթութեան

համար՝ կարևոր է ուժերի միացումը և ոչ կուսակցականը միայն միացնելու համար (ֆրակցիա) բաժանում, վերջապէս ամեն մի հոսանքի էռթիւնը միմիայն է կացեսների և տարօրինակութիւնների մէջ չէ, այդ նոյնական հասկանալի է, նամանաւանդ մեզ ոռւսական ինտելիգենցիայի (իմա և հայ) համար, որ յաւթենական, մշտական վիճողներ ենք, փայտ ծռողներ ենք, և վերջին կետին բեկորդ խփողները Գիտեցէք, նա, ով վերջին խօսքը չէ ասում վիճելիս—նրա սիրտը չի հովանում... ։

Մարինետին ինքը խոստովանում է, որ Փութուրիզմի իդէոլոգիան դեռ չէ ստեղծել և որ դա անազայ սերունդների գործ է և որ առայժմ հարկաւոր է աշխատել միմիայն մտաւոր գիզիենայի—առողջապահութեան վրայ։

Փութուրիզմը—ժամանակակցութեան (современность) արտայայտութիւն է։ Եւ մտաւոր առողջապահութիւնը՝ արտայայտելու է Փիզիքական որդի զարգացմամբ—սպորտի և մուղիյների ու մատենագրանների բոյկոտի մէջ։ «Ամեն մի պատճու մատենագրանում անցկացրած մի օրը կորած է»,—բայց ականչում է Մարինետին և իրեն թիգէալական պօէտ, նա մատնացոյց է առում իր ընկերոջ վրայ, որ նէապօլիտանցի սան կլիքումէ և երբէք չէ լսել Պետրարկայի և ոչ էլ Պանդէի մասին։

Եւ մեզ համար, որ և վարժակած ենք, ի՞ր և անդուսարելցու ինքնասիրութեամբ, թուլացած ու հիւանդու ջղերով օգտակար լինի թերևավարկւել Մարինետու պատաննեկան կենսութանութեամբ, բայց պայրելու և հաւատալու համար այդ մուսկուլների կրօնը միայն բաւարար չէ։

«ՇՈՒԹՈՒՐԻՍՑԵՆԵՐԻ ԶԳՈՒՄՆԵՐԸ ԻՆՍՏԱԿԱՆ ՎՐԱՅՈՒՄ»

Կարճ ժամանակում համեմատարար Փութուրիզմը գրաւեց բազմաթիւ նետկոբուներ սուցիչներ և աշակերտներ։

Երկան եկան Փութուրիստական պատկերները պրօպա և բանաստեղծութիւն—պօէզիա։ ըսկաւեցին Փութուրիստական դասախոսութիւններ կարդալ և այժմ տար սպաւոր կարարէներ սարքել։

Հասարակութիւնը քոլորզին բնականօրին ցանկացաւ ծանօթանալ գեղարւեստի նոր հոսանքի էութեան հետ։

Փութուրիզմը գեղարւեստական հոսանք է, թէկ իսկական Փութուրիզմը բարոզում է ձկեանքի բոլոր իսպանական նորոգում։

Ծատ բնական է, որ այս նորոգման ձայնին

րը լուեցին առաջին անգամ մի երկրում, որ իր անկման շրջանն է ապրում, որը իրանով ներկայացնում է մի հակայական գիրեղմանոց, ուր կեանքի և գեղարեսափ նոր շրջանակների ստեղծագործութիւնը վաղուց ի վեր մեռել է — զայտալիան է:

Այս ժամանակ, երբ ծաղկութ էին եւրոպական միւս տէրութիւնները, հէնց այդ ժամանակ Իտալիան քայլ առ քայլ կուլտուրապէս ընկնում էր և այդ անկման և տարրալուծման պրոցեսի միջից պատմականօրէն պէտք է ծնունդ առնէին նոր, ուր և գրգռող ոյժեր և այդպիսի առաջին ոյժը ներկայացաւ ֆութուրիզմը:

Ֆութուրիզմը իտալիայում մի քաղաքական և հասարակական շարժում է և այնքան լուրջ, որ ֆութուրիստների պարագլուխը — Մարինետին անցեալ ընտրութիւններին իր թեկնածութիւնն է դնում իտալական պարլամենտում:

Թէկ Մարինետին ձայների մեծամասնութիւն չըստացաւ, բայց ֆութուրիստների բաւականաչափ նշանաւոր թիւը ցոյց է տալիս, որ դէպի նրա — Մարինետիի թեկնածութիւնը վերաբերում են լուրջ կերպով:

† Ֆութուրիզմի քաղաքական կամ աւելի ճիշտ ասած հասարակական ցրծօն հետևեան է. մանրացու սրբ ու մայակ ուսած

1) Սէր դէպի իր երկիրը և ինչպէս հակական ատելութիւն դէպի Աւստրիան, իրու իտալիային սպառնացող ամենառութեղ դրացի:

2) Տարածել քաղաքի կուլտուրան, նրա արդիւնաբերութեամբ, գործարաններով և մեքենայական աշխարհով:

3) Միլիտարիզմ, ինչպէս անհրաժեշտ մի միջոց ազգի համար ոյժ ստեղծելու ուրիշ ազգերի վերաբերմամբ:

4) Մանտիմենտալիզմի բացակայութիւն և երկաթէ կամք, որոնք անհրաժեշտ են երկրի վերաստեղծողների համար:

5) Ատելութիւն դէպի ֆիլիստերականութիւնը, որովհետեւ երկրին հարկաւոր են հերոսներ, իսկ ֆիլիստերները երբէք չեն կարող հերոսներ լինել:

6) Եւ վերջապէս ատելութիւն դէպի կինը, ինչպէս թուլութիւն առաջ բերող մի պատճառ, ազրիւր, որը ազամարդուց առնում է նրա ամենալաւ տարիները, տրամադրում է նրան ցնորականութեամբ, և այդ այն դէպօրում, երբ կինը, միայն ինքն էլ հերոս և ստեղծագործող ոյժ չէ ներկայանում, ապա ուրեմն և չէ կարող հաւասարւել տղամարդուն:

Ահա սա է ֆութուրիստների քաղաքական հասարակական պրոցրաման:

ավան սժրութիւն և զովիքը զի լիսէն չէն (1)  
առաջ մոյս մայզառամ գրաք մայզեազնու ովզը  
**Ի ՏԱ ԼԱ ԿԱ Ն ՖՈՒԹՈՒՐԻ ԶԳՑՈՒՄՆԵՐԸ**  
**ԳԵՂԱ ՄՐԽԵՍՏԻ ՄԷՋ**

Քեղարւեստի մէջ իտալական ֆութուրիզմը  
արտայայտում է հին գեղարւեստը չաստածա-  
ցնելու մէջ: Հարկաւոր է կտրւել բոլոր հնից,  
հարկաւոր է հեռանալ թանգարաններից և եթէ  
չէ կտրելի հեռանալ նրանից, հարկաւոր է նրանց  
կործանիլ:

Եւ ահա ֆութուրիզմը գեղարւեստի մէջ  
բոլորպին նոր բան է մտցնում՝

— Շարժումի քարոզը:

Ֆութուրիզմը ասում է, որ կեանքը մարմ-  
նաւուած շարժումն է:

Կեանքը անդադրում շարժում է դէպի ա-  
ռաջ, առաջ է գնում և կատարում է անդադրում  
մի հզօր աշխատանք, որի մէջ աճում է քաղաքը,  
քաղաքի կուլտուրան և մանրանում է, փոշիա-  
նում է նրա մէջ գիւղական և երկրագործական  
կենցաղի նստածքը (յոկլած):

Եւ ահա կեանքի այդ կողմը, կեանքի ինքը  
— շարժումը ֆութուրիստներն աշխատում են տե-  
ղափոխել — մտցնել գեղարւեստի մէջ:

Ֆութուրիզմը տարրերային երկոյթ է: Գրա-

կանութեան պատմութիւնը — դա անընդհատ շար-  
ժում է և բանաստեղծների նոր սերունդը երբէք  
չէ կարող բաւականանալ և գոհանալ իրենց նա-  
խորդների սկզբունքներով: Երիտասարդ բանաս-  
տեղծները ինստինկտաբար ցանկանում են իրենց  
ուսանաւորների մէջ մարմացնել այն ամեն նոր  
բանը, որ մուտք է գործել մարդկութեան հոգե-  
բանութեան մէջ վերջին տասնամեակում, և լաւ  
թէ վատ այդ բանաստեղծները որոնում են այդ  
բանի արտայայտութիւնը:

Ահա դա է ֆութուրիզմի պատմական ար-  
դարացումը — ֆութուրիզմի, որ արագ կերպով  
իտալիայից և ֆրանսիայից անցաւ Գերմանիա  
և նոյնիսկ Անգլիա, հասաւ մեզ մօտ, նոյնիսկ  
Կովկաս — ճայերիս մօտ:

Այստեղ ես կըցանկայի սովորականից աւե-  
լի կանգ առնել իտալական ֆութուրիզմի վրայ  
և գլխաւորապէս Մարինետիի վրայ, որը իրա-  
ւամբ իտալական ֆութուրիզմի հայրն է կոչում  
և ֆութուրիստական շարժման հզօրագոյն պա-  
րագլուխն ու առաջնորդն է հանդիսանում:

Ֆութուրիստական փիլիսոփայութիւնը հիմ-  
նւած է անհատական ինդիվիդուալիստական մը-  
տածողութեան վրայ և էստետիկական ճաշակը  
գուտ անհատական զգացողութեան վրայ: Իւրա-  
քանչիւր անհատի մէջ կատարելապէս տարրեր և

ուրոյն ուրոյն արտայայտութեամբ։ Այստեղից առաջ է գալիս կատարելապէս մի թէօրիայի, մի պրոգրամայի բացակայութիւնը, որ յատուկ է կոլեկտիվիսաներին։ որոնց համար տեսակէտը և թէորիան առաջին տեղն են բռնում, մինչդեռ ֆութուրիստը ինքը անհատն է և նրա ինք նուրոյն ըմբանումը ու հասկացողութիւնը և տեսակետը է և թէորիա։

Ինքը մարդը տիեզերքի կենդրունն է, որի մէջ ինչպէս ֆոկուսի մէջ անդրադառնում է ամեն։ ինչ—ահա ֆութուրիստի ամբողջ տեսակետը և թէորիան։

Առ նորթան մարդ, այնքան կենդրոններ, և այնքան ֆոկուսներ, որոնց մէջ ինչպէս սպեկտորի մէջ կատարելապէս տարբեր կերպով անդրադառնում է այսպաքին աշխարհը, տալով տարբեր գոյնի և տարբեր իրացումների ճառագայթներ։

Եւ ահա այդ ուլտրա-անհատականութիւնը ֆութուրիստներին մզում է դէպի ինքնուրոյն մը տածողութիւն, ստեղծագործութիւն։ առանց մի որեէ կապի անցեալի հետ կը ընդհակառակը ֆութուրիստների ամբողջ թափը ուղղած է անցեալի վրայ և ստած հաստ շերտը կեղևահանելու, ուրիշ խօսքով անցեալի ժանր լուծը, ճընշումը ներկայ մարդու վրայից վայր ձգելու համար։

Ֆութուրիստի գլխաւոր նպատակն է—կըտրել անցեալի հետ ներկան կապող թելը։

Իտալական քանդակագործ ֆութուրիստ Բոչչոնին ասում է,—իմ մէջը մտել է Միքել Անջելոյի ստերը և ինձ թոյլ չի տալիս ստեղծագործելու ծառ, ինչ գնով էլ լինի, պիտի ազատւեմ այդ հրեշտական երկոյթից։

Մարինետին ասում է—իտալիան գտնում է իր մեծ և փառաւոր անցեալի ճնշման տակ։ Այդ հութեան մեծութիւնը ծանր կերպով նըստում է, ճնշում է ներկայի վրայ և թաղում է իր տակը նոր ծիլող երիտասարդ հանճարները։

Անցեալի փայլով մթագնած իտալիան այժմ շատ չնչին, է երկում։

Մարինետին ոչ միայն չի բացասում, անցեալի մեծ ստեղծագործութիւնները, այլ նոյն նիսկ հոգով, ցաւում է, որ նրանք չափազանց մեծ են և իրանց մեծութեամբը կաշկանդել են երիտասարդ ոյժերը, երիտասարդ տաղանդները։

Այժմ մարդը ըստ Մարինետիի բոլորովին այլ կերպ է մտածում, զգում, որովհետեւ ատելեա ֆոնով օգտուղ այժմեան մարդը բոլորովին այլ կերպ է մտածում, քան նրա նախահայրերը, ուրոնք տելեֆոնի մասին գաղափար էլ չունեին։ Իսկական ֆութուրիզմը երիտասարդութեան և առողջ ու լուսաւոր ոյժերի յաղթանակն է։

Նա պիտի նորոգի մարդուն, երիտասարութեան վատահութիւնն ներշնչի և տայ մերներ կային իր կորցրած ստիլը, գոյնը, երեսը (լուկէ):

Հէնց այդ բանը ակնտրկելու համար Մարինետին ասում է՝ իմ շուրջը խմբւել են քսանամեայ մեծ բանաստեղծներ — թուղթի, է. Կավակիօլի, Լիբրո Ալտօմարէ, Արմանդօ Մացցա, Ա. Պալեցցեսկի, որոնց արդէն փառքը ժպտում է, — նրանք ինձ հետ միասին ոտանաւոր և արձակ գրւածքներով դիմակազուրկ էին անում այն խայտառակ գրութիւնը, որի մէջ խրւել է մեր ինտելիգենցիան, օպօրտիւնիզմը և միջակութիւնը և կոչ էին անում ազգային արժանապատութիւնը բարձրացնելու անհրաժեշտութիւնը, առանց որին անհամարին է գրականութիւնը և գեղարեսութիւնը է ներշնչել ազատ, կիս դասի ողի և զգալ իրեն ապագայի շինարարը և ոչ ստրուկ և անցեալի փոշու մէջ թաղւած երկրագու:

Մէնք մեզի նպատակ ենք դնում եռանդուն կոիւ մղել և կործանել անցեալի կուլտուր Մատածել էք արդեօք դուք անթիւ անհամար մեռած հանճարների մասին, որոնք ամեն կողմից խտանալով ճնշում և խեղդում են փոքրաթիւ ապրող հանճարները:

Մարդիկ սովոր են մտածել միմիայն մեռած

հանճարների մասին, աշխատում են միմիայն նրանց մասին, ծախսում են միմիայն նրանց վրայ, Նրանց համար ամեն ինչ հեշտ է և պատրաստի, ճանապարհները հարթած և դռները բաց են: Նրանք հանդիսաւոր կերպով յայտնւում են ամեն տեղ, անցնում են մեր քաղաքներով, մտնում են մեր տները, վարագում են մեր գարնանային մթնոլորդը գերեզմանային գարշահոտութեամբ: Եւ մարդկէ, որոնք ապրում են անցեալի մեծութիւններով, անցեալը նրանց ներապրութեամբ կը լիւաւոր էլեմենտներից մէկն է, կոչում են պատմէիստներ (անցեալի մարդկէ):

Ալդպիսով հին, անցած, մեռած հանճարների և տարտնդների ստեղծագործութիւնները առնելում, գնւում են, սպառում ունեն, իսկ ինչ որ կը վերաբերի կենդանիներին, նրանց բաժինն է միմիայն արհամարհանք, վիրաւորանք և զրադատանք:

Երիտասարդութիւնը — ահա ում համար ենք մենք կուռմ, որովհետեւ նրանք կենսունակներից ամենակենսունակն են, երիտասարդութիւնը, որոնց բաժինն է սովոր:

Պէտք է ասել, որ այն գրամը, որը ծախսում է իտալիայում գեղարեսատի վրայ, ժողովւում է գերեզմանափոքների ամուր կարած գըրպանները: — Ես աչքի առաջ ունեմ պասմէիստ

հրատարակիչներ, պլոֆեսորներ, գիտնականներ, պրոֆեսորներ, մերկանտելինի հոգով և նախանձուտ չարախօսութեամբ, որի դէմ մենք կուռում ենք.

Միթէ մեզանում էլ համարեա նոյն բանը չէ, միթէ մեզանում էլ կոպիտ բնադրատը իր բիրու ճաշակով և քարտաշի կոպիտ մատներով չի ժատենում: Հայկական նորածիլ, նորաբողոքով գեղարւեստական գրականութեան և նրանց ներկայացուցիչներին, նամանաւանդ, եթէ նրանք գոյութիւն ունեցող մեծ նաևերի լրագիրների սնարից դուրս են գտնւում: Զի՞ որ բոլոր տաղանդները և գիտունները նոյ նահապետի տապանի գոյգերին նման պատսպարւած են այդ նաւերի մէջ:

Միւս կողմից միթէ մեր հրատարակիչները նոյն պասսէիսանները: Են, միթէ մենք ամբողջ ընկերութիւններ և կտակւած դրամներ չունենք հրատարակելու միմիայն փոշոտւած Խորենացիներ, և Ագաթաքէղոսներ, և միթէ դրանց վրայ յատկանգէն պարապող ռժիտնականները չունենք: որոնց բանն ու գործը միմիայն կոտրած ըլթիք պոչը որոնելու մէջը չէ: Ունենք և հրատարակչական ընկերութիւններ և մարմիններ, որոնք պասսէիսա են բառի ամենալայն մտքով: Մի նորագործոջտաղանդի գրողի գրանքը հրատա-

րակել նրանք համարում են գրամը ջուրը թափել, բայց կարող են հրատարակել մի որևէ փոշոտւած և վաղուց մուզէի հնութեան անցած գըլողի գրաւածք: Կամ մի որևէ եւրոպական ճանաչւած հանճարի գրաւածքի թարգմանութիւնը, որոնք հաւասարապէս դառնում են պահեատի փոշոտւած դարակներում մկների կերակուր, որովհետեւ այժմեան սերունդը պահանջում է թարմ մտաւոր մնունդ, ապա ուրեմն այժմեան գրականութիւն և այժմեան կեանքի երգիչներ:

Իւ այդպիսի անցեալի այդ շահագործողների տիրապետութեան օրօք, բացականչում է է Մարինետին, —իւրաքանչիւր օր սպանում են մի որևէ հանճարեղ բանաստեղծ, նրա զլիին շպրտելով հինգ դար առաջ մեռած մեծ բանաստեղծի չորացած մումիան:

Հրատարակիչները զամբիւղն են գցում սոված հանճարի ձեռագիրը և իրանց դրամները ծախսում են բոլորին արդէն յայտնի, աւելի քան յայտնի և հարիւր անգամ հրատարակւած շեղեւրների հրատարակութեան վրայ:

Ամերիկայի միլիարերները գրգուած ըեկամիստ գերեզմանսափորներից գալիս են իտալիա և վճարում են կատաղի փողեր մի որևէ սպեկդագործութեան համար, որի ամէնամեծ արժեքը կայանում է յաճախ միմիայն դարաւոր

ցելիր և կողմէւ մէջ՝ որով ծածկւած է լինում  
այդ անցեալ ղարերի համարի թանգարժէք ստեղ-  
ծագործութիւնը։  
Հնապաշտութեան կուլտը համատարած է  
ամենատեղ, նոյն իսկ մեզանում, թէև մինք չու-  
նենալով միլիարդերներ, այնուամենայնիւ միթէ  
հարիւր ճագար՝ չենք ժողովում շինելու մի ազ-  
գագրական պալատ; ուր ժողոված կը լինեն պեղ-  
ւած քարէ ամանները և դարաւոր փթած փայտի  
ու ժանդուած մեխի կտորները։ Մինչդեռ մեր  
տաղանդաւոր արտիստները և գրողները սովոր  
են մեռնում։

Մեր բանաստեղծութիւնը բոլորովին կա-  
պանքննրից դուրս է, աղատ է և ինքնարուղիս է  
ինչպէս հրաբուխակրակը, հուրը։ Գէտք է վեր-  
ցնել ոտանաւորների (հանգերի) բելմները և  
պայթեցնել արդէն ծանօթի—ասածի (յայտ շա-  
բանաթիւնութիւնութիւն) կամուրջները և ներշնչման շոգեկանքը  
(լոկոմուտիւնը) թռիչները նոր անծանօթ դաշտերով։  
Անելի լաւ է խորտակումն (կրցանու), քան  
նախածանօթ և մօնօտն ճանապարհորդութիւն։  
ասում է Մարինեախն։

Բոլոր ազանութիւնները և ամեն տեսակի  
յառաջտդիմութիւնը լինելու է աղդաւին շրջա-  
նում։ Մենք միասնականում ենք հայրենանիրու-  
թիւնը, մենք երգում ենք պատեմիազմէլ, այդէնու

տուզիազմի և մեծահոգութեան, հնկարական բը-  
անկումը, առանց որի ցեղերը կաշկանդում են,  
քարանում քնաբեր եսամուլութեան մէջ և ստոր  
վաշխառական գծծիութեան և գլատութեան  
մէջ, դարձեալ բացականչում է Մարինեախն։

Մենք արհամարհում ենք և բացասում սիրոյ բռնակալութիւնը և էրոտիկական հրապու-  
րանքը, փորձութիւնը, որոնք մեզ, լատինական  
ցեղերի մօտ թուլացնում է գործելու էներգիան։

Այդ կողմից մենք արևելցիներս պահանջներ լատինական ազգերից, պէտք է ասել։

Բոլոր այս այրող և շարժող ուժագնակ  
(динамический) գաղափարները, մի ուրիշ տեղ  
ասում է Մարինեախն, գրգռում և յուղում  
են հասարակութիւնը։ Բայց մենք համուշած  
ենք, որ աւելի թեթև և ստոր բան չըկայի,  
քան հասարակութեան բաւարարելը և հաճոյա-  
նալը, շոյելով նրա կոպիտ և աւանդական ճա-  
շակները։ Ահա ինչու մենք ցանկանում ենք բա-  
ւարարել, գոհացնել միայն մեր մեծ ֆութուրիս-  
տական իդէալին և ներկայ ժամանակում չենք  
պահանջում դէպի մեզ թշնամաբար տրամադրու-  
ւած հասարակութիւնից ոչինչ բացի մուլիցներ։

Հակակշիռ այդ սուլոցների Մարինեախն,  
իրեկ իսկական փութուրիմտ խորապէս հաւատա-  
ցած իր աւած, բգեղեցկութեան մնջութեան իր

«Թութուրիստ Մակարտ» ըոմանի՝ յառաջաբանի  
մէջ ասում է.

— Ես մենակ՝ համարձակւեցի գրել այդ  
շենքը և իմ ճեռքերից էլ կընդունի նա իր  
մահը, եթիւ աշխարհի աճող շքեղութիւնն ու փար-  
թամութիւնը կըդարձնի նրան աւելորդ և ան-  
պէտք:

Ինչ էլ որ չասեն պատագրայի և կարև-  
ծի բնակիչները, ինչպէս մարդկային մտքի ան-  
մահութեան դրօշակ ամենաբարձր գագաթին նա  
աղմկում է ծածանւելով փառքի քամով:

Եւ իմ ստեղծագործողի հպարտութիւնը  
բաւարարուած է:

Իսկ ըոմանի հերոսը մի տեղ ըոմանում ա-  
սում է.—«Մեր ոգին իբրև կազմակերպւած և  
կենդանի նիւթի բարձրագոյն արտայայտութիւն  
իր բոլոր ձևափխութիւնների մէջ հետևում  
է նոյն ինքն նիւթին, պահպանելով իր նոր ճենքը  
մէջ իր անսցեալ լզգացողութիւնները, իր վաղժ-  
ւած էներգիայի նուրբ վիրացիաները (երերում-  
ները),

— Եւ թող մեր կեանքի փոթորկալից կաքի  
գծըծողութիւնները մղւեն դէպի հոյակապութիւն,  
փարթամութիւն, բխսկից ըխսկ, անընդհատ շըր-  
ջելով մահւան ցուրջը, որը իւր կոպիտ համբոյք»

Ներով կանմահացնէ մեր վերայիշւող ֆրագմետ-  
ները բոլոր իր գեղեցկութեան մէջ»:

Զա՞ն, զա՞ն,—բացականչում է մի այլ տեղ  
Մարինետին, եւ իրաւ, ասում է, մենք ցանկա-  
նում ենք, որ գեղարւեստական ստեղծագործու-  
թիւնը այրւէր հեղինակի դիակի հետ միասին:  
Այս, ինչ որ մնում է մեռած հեղինակից յետոյ—  
վարակում է կենդանի հանճարներին տխրու-  
թեամբ, խոհեմութեամբ և խարդախ իմաստու-  
թեամբ: Ֆլորենցիան—մի ահագին միջնադա-  
րեան փարթամ ֆօլիանթէ (մեծածալ գիրք), որ  
ընկել է աշխարհի ամենասուրախ տեղուութեամբ:

ՁՈՒԹՈՒՐԻՍՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷ-  
ՊԻ ՊԱՑԵՐՎԱԶՄԸ ԵՒ ԿԻՆԸ

— Մենք հաստատում ենք, իբրև ֆութուրիզ-  
մի բացարձակ նկղրունք մարդու ֆիզիօլոգիական  
և ինտելեկտուալ անդադրում և անվերջ յա-  
ռաջադիմութիւնը: Մենք չենք ընդունում ազգե-  
րի բարեկամական ձուլումը և ընդունում ենք  
աշխարհի համար միմիայն մի առողջապահու-  
թիւն—պատերազմը, ասում է Մարինետին: Մի  
այլ տեղ:

իտալական ֆութուրիստների տաելութիւնն  
ու արհարհանքը դէպի կինը այսպէս է արտա-  
յայտում Մարինետին:

— Այն, մենք արհամարհում ենք կանանց,  
այդ սիրոյ աւաղանը (резервуար), հեշտասիրու-  
թեան գործիքը, կին՝ թոյնին, կնոջը, այդ ողո-  
բերգու խաղալիքին: Արհամարհում ենք ալդ  
բեկուն ու փխրուն, արբեցնող ու ճակատագրա-  
կան կնոջը, այդ բաղդի ձնշիչ ձայնով և անտա-  
ների ծառերի մէջ շարունակող և լուսնի լոյսով  
շղլւած և շղարշւած երազկոտ կնոջը:

Մենք արհարհում ենք ահռելի և վտանգա-  
ւոր Սէրը, որ կասեցնում է մարդկութեան ըն-  
թացքը և խանգարում է նրան դուրս գալ իր  
մարդկայնութիւնից, կրկնապատկելու և գերա-  
զանցելու ինքն իրան, որ դառնայ այն, ինչ մենք  
կոչում ենք բազմապատկած մարդ:

Մենք համոզւած ենք, որ Սէրը, զգացմուն-  
քը և հեշտասիրութիւնը ամենասակաւաբնական  
բաներն են աշխարհքում:

Բնական է միմիայն սերունդի շարունա-  
կութիւնը:

Սէրը, րոմանտիկական հրապուրանքը և հեշ-  
տասիրութիւնը ուղղակի բանաստեղծների ստեղ-  
ծածն է ու մարդկութեանը պարգևատրած:

Նաստեղծներն էլ յետ կը վերցնեն այդ մարդ-  
կութիւնից:

Սիրոյ տրագիկոմիկական փորձը մօտիկ է  
իր վերջին, որովհետև նա ոչ մի օգուտ չըբերեց,  
այլ ընդհակառակը անթիւ վասաներ հասցըրեց:  
Այժմ մենք ֆութուրիստներս, ասում է Մարինե-  
տին, հեռացնում ենք սէրը, այդ գրականութեան  
պըոդուկտը:

Այդ ազատագրութեան ջանքի մէջ սուֆրա-  
ժիստկաները մեր ամենալաւ աշխատակիցներն  
են, որովհետև որքան կինը ձեռք կը բերի շատ  
իրաւունքներ և իշխանութիւն, այնքան նա սուլ  
կըդառնայ սիրոյ մէջ, այնքան շուտ նա կը  
կադարի սանտիմենտալ լինելուց և կրքի սև  
բաւականութեան օջախ դառնալուց: Նամանա-  
ւանդ որ կանացի շոայլութեան հրեշտար զար-  
կացումը սէրը զարձնել է մի ստրուկ, որը ըմ-  
բոստութեան քիչ թէ շատ բռնկումներ է ցոյց  
տալիս միմիայն դրամի ձնշող բռնցքի տակ:

ԱՍ.ԶՄԱ.ՓԱ.ՑԿԱ.Ծ ՄԱՐԴԸ ԵՒ ՄԵՐԵՆԱՅԻ  
ԹԱԳԱ.ՏՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեքենայապաշտութիւնը՝ ֆութուրիստների մէջ ծննդրել է այն միտքը, որ մարդու ոյժերն կարելի է աւելացնել—բազմապատկել, դարձնելնը-րան մեքենայ:

Մենք քարոզում ենք մի մեծ և նոր գաղափար, որը գոյութիւն ունի և շրջանառութեան մէջ է ժամանակակից կեանքում—դա մեքենայական գեղեցկութեան գաղափարն է, մենք փառաբանում ենք սէրը դէպի մեքենան,—ասում է Մարդինետին:

Այդ սէրը արգէն իսկ կեանքի մէջ գոյութիւն ունի: Անշուշտ պատահած կը լինէք, ինչպէս շոգեկառքի մեքենավարը ինչպիսի սիրով և փայփայանքով է լանում իր մեքենայի հսկայ մարմինը:

Ցանախակի դուք աւտոմոբիլների տէրերից կամ գործարանի կառավարչից կը լսէք՝ Մոտորները ուղղակի հանելուկային են, կարծես նրանք հոգի ու կամք ունեն, հարկաւոր է շողոքորթենանց, սիրաշահել, խնամք տանել նրանց վրայ և ելքէ չըվարւել նրանց հետ կոպիտ կերպով և ն

յոգնեցնել նրանց: Եւ եթէ դուք այդպէս վարւեք նրանց հետ, դուք իսկոյն կընկատէք, թէ որքան նրանք առաւել արդինաբեր են լինում և երկուերեք անգամ աւելի գործում:

Հարկաւոր է և մարդուն նոյնացնել մեքենայի հետ, և ու հաւասար ֆութութիւնունեցնելը, —որ մարդն էլ մեքենայի նման ունտայիր մեքենական ինտուիցիան, րիթմը, ինստինկտը և դիսցիպլինան—յատկութիւններ, որոնք մեծամասնութեան այժմ անծանօթ են, բայց որ ըմբռնում են միմիշայն՝ ամենաթափանցող ուղեղները:

Այդպիսով ընդունելով Լամարքի տրանսֆորմատորական գիպոտեզան, ֆուտուրիստները երազում են ստեղծել մի ոչ մարդկային տիպ (դա նիցէի Հուբերմենցը չէ), որի մօտ ոչընչացրած, սպառած կը լինեն բոլոր բարոյական տանջանքները՝ բարութիւնը, քնքշութիւնը, սէրը՝ ինչպէս նրանք ասում են, —որը թունաւորում է մեր անսպաս կենսական էներգիան, որը ընդհատում է մեր մէջ գտնած կարող ֆիզիոգիական էլեկտրականութիւնը:

Մենք հաւատում ենք, —ասում են ֆութուրիստները, —մարդու անթիւ տրանսֆորմացիաներին և առանց ժպիտի յայտարարում ենք, որ մարդկային մարմնի մէջ թւեր են ննջում:

Ոչ մարդկային—տարբերային և մեքենայաշ-  
կան տիպը, որը ունենալու է ամենուրեք հաս-  
նող, լինող արագութիւն, բնական է, որ լինե-  
լու է դաժան (յեստոկի), ամենադէտ և պատե-  
րազմող, կռւող ու մաքառող:

Եւ որպէսզի պատրաստենք ալո ու պատված  
մեքենայական տիպը.  
— ասում են ֆութուրիստները, — հարկաւոր  
է արտասովոր կերպով նւազացնել մարդուն կա-  
պող, կաշկանդող զգացմունքները, որոնք դեռ  
ապրում են մարդու արեան մէջ:

### ՅՈՒԹՈՒՐԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԳԼՈՒԽ ՍԻՄԻՈԼԻՍՑՆԵՐԸ

Մենք բացասում ենք լուսնի վերջին սիրա-  
հարներին—մեր ուսուցիչներին—սիմոլիստնե-  
րին, բացականչում են ֆութուրիստները: Մենք  
ամեն ինչ զո՞հ բերեցինք կեանքի մեր ֆութուրիս-  
տական հասկացողութեան և ահա ինչու համար  
դուք հեշտութեամբ կըհասկանաք ինչու համար  
մենք այժմ ատում ենք մեր փառաւոր մտքի (ին-  
տելեկտուալ) հայրերին, որոնց առաջ անշափ  
մենք սիրում էինք,—մեծ սիմոլիստ հանճարներ

— էղգար Պօին, Բօդլերին, Մալարմէին և Վեր-  
ինըին:

Այսօր մենք վրդովում ենք նրանցով, որով-  
հետև նրանք լողում էին ժամանակի գետի ըն-  
թացքով, անդադար իրենց գլուխները դարձնե-  
լով դէպի յետ (այդպիսի գլուխը յետ դարձնող-  
ներից զուրս եկաւ և մեր բանաստեղծ Վահան  
Տէրեանը, որը նորագոյն գոյնի սփացանելիք հա-  
գած և խոզանակը ձեռքը մտաւ հայ փողոտւած  
կատակօմքը և փոխանակ մաքրելու փողոտւած  
մումիաներին՝ սկսեց նոցա հետ համբուրել—տը-  
րագիցիսները գեռ զօրեղ են; ըստ երեսյթին, և  
նորագոյն բանաստեղծների (մէջ) հեռու խորը  
անցեալի Ազգիւրին, առաջւան երկնքին, ուր  
ծաղկում է գեղեցկութիւնը: Նոցա համար չըկայ  
բանաստեղծութիւն առանց թախծի, առանց ան-  
ցած ժամանակները յետ կոչելու, առանց պատ-  
մական և լեգենդար մառախուզի:

Մենք ատում ենք սիմոլիստ վարպետ-  
ներին, մենք, որ համարձակւեցանք մերկ դուրս  
գալ ժամանակի գետից:

Մենք երգում ենք մեքենայի աճող յաղթա-  
նակը, որը հիմարաբար նրանք ատում էին:

Մեր սիմոլիստ հայրերը վարակւած էին  
մի տեսչով, որը մենք ծիծաղելի ենք համարում,  
այսինքն տեսչ դէպի յաւիտենական բաները,

ձգտում դէպի յաւիտենականը և անանցնելին:

Քիսկ մենք ընդհակառակն ենք մտածում—  
չըկայ առաւել ցած և ողորմելի բան, քան մտա-  
ծել անմահութեան մասին:

Ք Հարկաւոր է ստեղծագործել առանց մըցա-  
նակի, առանց մտածելու, որ դա վարձատրւելու  
է կամ ստեղծագործովից յետոյ ապրելու է, ինչ-  
պէս իրական վկայ:

Թախծոտ սպասողականութեան պօէզիային,  
մենք հակադրում ենք ջերմոտ սպասողականու-  
թեան պօէզիան:

Ք Գերեզմանների վրայ քնքոյշ թեքւող ար-  
տասուող գեղեցկութեան, մենք հակադրում ենք  
Պիլոտի, շոփերի կտրուկ, սուր պլոփիլը:

Անանցի և յաւիտենականի ըմբռնման տեղ

մենք հակադրում ենք գեղարւեստի մէջ անցո-

ղակիի, ըայբայումի և անյարատեսութեան ըժ-

բռնողութիւնը:

Մենք կերպարանսափոխում ենք եղիքը Պօի  
սուր ուրախութիւնը nevermore-ը և սովորեց-  
նում և սիրում ենք զգացողութեան (օշացենիք)  
և յոյզի (ՅՈՅԱ) գեղեցկութիւնը, որովհետև նա  
եղակի է և նախօրօք վիճակւած է անդառնալի  
ոչնչացման:

Պատմութիւնը մեր աչքում անխուսափելի  
կեղծող է (ֆալքսիֆիկատօրъ) կամ առնւազն պոս-

տի մարկաների, մեղաճների և կեղծ գրամների  
կոլեկցիոններ:

Անցածը աւելի ցած է և պակաս արժէքա-  
ւոր ապագայից: Եւ ինչպէս կարող ենք մենք ճա-  
նաչել մեր թշնամիներից ամենավտանգաւորի  
ծառայութիւնները—անցածի, այդ դաժան խա-  
րեցայի և ատելի խնամատարի:

Մենք երգում ենք մեքենայի արագութիւնը,  
որը ոչնչացնում է վայրենի անապատների հե-  
ռաւորութեան պօէզիան: Եւ երգում ենք և փա-  
սաբանում երկաթուղու կամուրջները, տուրքին-  
ների ահազին ջրախողովակները, այդ երկրի  
մուսկուլները, երկրի հսկայ մեքենայական շար-  
ժումը, որովհետև սրանք կործանում են երկրի  
հիւանդոտ զգայնութիւնը:

Ֆութուրիստական լիրիզմը, մտքի յաւիտե-  
նական դինամիզմն է (ոյժը—շարժողութիւնը),  
մտապատկերների և հնչիւնների անվերջ հոսանքն  
է և միմիայն ֆութուրիստական լիրիզմն է, որ  
կարող է արտայայտել մեղ հետ և մեր մէջը դա-  
րբնող անհարատկ, անհաստատ և սիմֆոնիկա-  
կան (страйность звукаовъ) տիեզերքը:

ՆԻՑԵԽՆ ԵՒ ՖՈՒԹՈՒՐԻ-ՍՑՆԵՐԸ

Ֆութուրիստները բացառում են և Նիցչին,  
և սխալ է այն հնդաղութիւնը, որ ոմանք կար-  
ծում են, որ ֆութուրիստական աշխարհայիշ-  
ցողութեան մէջ կան Նիցչեական էլեմենտներ։  
Անգլիայի սամուլը ֆութուրիստներին անւանում  
է նոյնիսկ Նիցչեականներ, մինչդեռ Մարինե-  
տին իր գրքում դրա դէմ բողոքում է։  
Բայց բաւական է ծանօթանալ գերմանա-  
կան մեծ փիլիսոփայի ստեղծագործութեան կազ-  
մութեան հետ, որ մարդ համոզւի, որ նրա գեր-  
մարդը յունական տրագեդիայի փիլիսոփայական  
կուլտից է առաջացել և հնդաղութիւն է առաջ-  
բերում, որ ստեղծագործողի՝ Նիցչի մէջ յետա-  
դարձ փափագ կայ դէպի հեթանսութիւնը և մի-  
ջազմական—դիցաբանութիւնը։ Եւ չընայելով նը-  
րա դէպի ապագան ունեցած ձգտումներին, Նից-  
չին կը մնայ անտիկ մեծութեան և գեղեցկութեան  
ամենաւսանգուն պաշտպաններից մէկը։

Նրա գերմարդը Հելլենական ծագում ունի  
և միաւորումն է երեք կազմալուծող դիակների—  
Ապօղուի, Մարսի և Վակիի։  
Դա խառնուրդ է էլեգանդ գեղեցկութեան,

պատերազմող ոյժի և Դիոնիսեան զմայլման,  
ինչպիսին մեզ ցոյց է տալիս մեծ կլասիկական  
գեղարքեստը,

Եւ մենք հակադրում ենք այդ յունական  
մատենադարանների փոշու մէջ ծնւած գերմար-  
դուն, ինքն իրեն վոան բաղմապատկւած մար-  
դուն, որը գոքի թշնամին է, անձնական փորձի  
բարեկամ, մերենալի սան, իրեն կամքը եռանս-  
դուն կրթող և իր ներշնչման փայլի մէջ կատուի  
զգայնութեան, կայծակի ըմբնողութեան, վայ-  
ընի ինստիլտի, և ինտիուցիայի տէր, դրա հետ  
միասին նենք և անխոնեմ։

Եւ դուք կատաղի կոիւ պիտի մդէք,—ա-  
սում են ֆութուրիստները,—գեղարքեստի երեք  
անհաշտ թշնամինների և ապականիշների դէմ,  
այն է նմանողութեան, խոնեմուրեան և դրամի  
դէմ, որոնք մի կէտի են բերում գեղարքեստա-  
գետին—վախկոտութեան։

Վախկոտութիւն զարմանալի նմուշների և  
ընդունած ֆորմուլների վերաբերմամբ։ Վախկո-  
տութիւն սիրելու պահանջի առաջ և աղքատու-  
թեան վախի առաջ։

ՅՈՒԹՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԼՍՑԵՏԻԿԱՆ

կերպարանափոխւել է և փութուրիստական էստետիկան և փոխանակ առաջւայ մարդու իդիուլական էստետիկայի, առաջ է եկել մեքենայական, տեխնիկական, այսպէս ասած, էստետիկան—այսինքն մեծ լօկոմոտիվների, տոնելների, մարտանաւերի, մօնոպլանների (օդանաւերի), աւթոմոբիլների և նման տեխնիկական հրաշալիքներից առաջացած էստետիկան:

❖ Ֆութուրիստները ստեղծել են նոր, արագութեան էստետիկան, համարեայ ոչնչացնելով տարածութեան պատկերացումը և չափազն նաղացնելով ժամանակի պատկերացումը։ Շոգեշարժը, օդանաւը, տելեֆոնը, հեռախօսը, անթելտիկանը և այլն այժմ շատ հեշտութեամբ կատարում են այդ արագութեան փունկցիան և կերպարանափոխում են ժամանակի և տարածութեան պատկերացումը։

Սյդպիսով նախապատրաստում է ամենուրեք լինող բազմապատկած մարդը։

Ի հարկէ, այսպիսի պրոգրեսի սիրահարութիւնը առաջ է բերելու և դաժանութեան սկզբունքը և ահա ինչ է ասում Մարինետին՝ Ռ-

չինչ չըկայ աւելի լաւ բան, քան կառուցանող տան շուրջը կարւած տախտակները և սիւները, իրենց բլոկների և մուրճների րիթմով և ժամանակ առ ժամանակ վայր ընկնող բանւորի ճիչով և նրանից թափող խոշոր կաթիների արիւնով։

—Վախեցէք փթած անցեալից, —ասում է մարինետին, —յուսացէք ամեն ինչում ապագայի վրայ, Հաւատ ունեցէք դէպի պլոգրեսը —յառաջադիմութիւը, որը միշտ իրաւացի է, նոյն իսկ այն ժամանակի, երբ սխալում է, որավհետև նաշարժում, կոիւ և յոյս է արտայայտում։

—Զգուշացէք յառաջադիմութեան հետ դաւի բռնւելուց, Թող յառաջադիմութիւնը լինի խարերայ, սրիկայ, գող, —միշտ իրաւացի է։

Սա դաժան հեթանոսութիւն է, որը արտայայտում է յանուն յառաջադիմութեան, իտալիայի ֆութուրիզմը թէև նիցշէականութեան հակառակ է, բայց ինքն էլ իր աշխարհհաճայեցողութիւնը կառուցանում է հին հոռվմէական հեթանոսութեան վրայ և դարերի մութէն զարթեցնում է հին դաժան ներոնեան Հոռվմը։

Բայց ամենացայտուն ֆութուրիստական սիմեոններից մէկը գալիս է հեռաւոր եապոնիայից, որ այժմ մարդկային ոսկոներից պատրաստում են ամենաամուր և ամենաառժեղ քումուրը —ածուխը, որը գործածում է ամենապայ-

Թուցիկ նիւթեր պատրաստելու գործարաններ  
ըռում:

+ Որքան էլ սա կոպիտ և զգացմունքները  
վիրաւորող հասկացողութիւն լինի, այնուամենայնիւ յանուն պրոգրեսի սա հասկանալի է, նա-  
մանաւանդ այնտեղ, ուր շարժման կուլտն է ա-  
ռաջ մզւում և ուր մարդը—մեքենան իդէալն է,  
այնտեղ ոչ մի սանտիմենտալ—լիրիզմ գոյութիւն  
չէ կարող ունենալ թէկուզ ձեր սիրելու ոսկոռ-  
ները ածուխի ձեռվ իջնեն ձեր խմած թէյի հեշ-  
տաեռի խողովակի մէջ:

Չըպէտք է մոռանալ և այս, որ գանազան  
ազգերի մօտ բոլորովին ուրոյն-ուրոյն կերպով  
է արտայատում ֆութուրիզմը: Այսպէս, ոռւ-  
սական ֆութուրիզմը բոլորովին այլ բան է, քան  
իտալականը: – Ցեղականութիւնը (раса), զօրեղ  
դեր է կատարում այս գէպրում: +

### ՖՈՒՌԻՍՏԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Հետաքրքրական է իտալական նկարիչների,  
ինարկէ, ֆութուրիստ նկարիչների, տեսակէտ-  
ները և սկզբունքները նորագոյն—ֆութուրական  
նկարչութեան վերաբերմամբ:

Դէպի ճշմարտութիւնը աճող հետաքրքրու-  
թիւնը չէ կարող այլեւ, ասում են նրանք, ար-  
տայայտւել ճնող և գոյնով (ֆօրմօյ և ցենտօմ)՝  
այնպէս, ինչպէս նրանք հասկացւում էին մինչկ  
այժմ:

Ժեստը, որը մենք ցանկանում ենք գուրս  
բերել քաթանի վրայ, այլեւ չի լինի տիեզերա-  
կան դինամիզմի (ոյժ) լուսանկարւած մի մոմենտ  
(фиксируемым моментом):

Եւ իրաւ ամեն ինչ շարժւում է, ամեն ինչ  
վազում է, ամեն ինչ արագ կերպով կազ-  
մակերպւում է:

Շարժւող առարկաները բազմապատկւած են,  
ձեափոխում են և շարունակւում են, ինչպէս  
տարածութեան մէջ արագացող վիրրացիա: Այս  
պէս վազող ձին ունի ոչ չորս ոտներ, այլ քսան  
և նրանց շարժումը եռանկիւնաձեն է,

Ամեն ինչ գեղարւեստի մէջ պայմանական

է և ոչ մի բացարձակ բան չըկայ նկարչութեան մէջ, Այս, ինչ որ ճշմարտութիւն էր երեկուայ նկարիչների համար, այսօր դժունս է գալիս ոչ ճշմարտութիւն (լոյն):

Փութուրիստները օրինակ յայտարարում են, որ պատկերը չըսկիտի նմանւի ինքը իրեն, իր ընականութեան և որ նկարիչը ինքը իր մէջ կը ըռում է պէյզաժներ, որոնց ցանկանում է լուսանկարել քաթանի վրայ:

Ինչպէս մարդկային ոգու անհատական հետախուզութիւնը աւելի տարել է զուգմայի անշարժ մթութիւնը, նոյնանման ևս զիտութեան կենարար հեղեղը շուտով պիտի ազատի նկարչութիւնը ակադեմիֆիկան տիրադիցիաներից:

Մենք ինչ որ էլ լինի, ասում են Փութուրիստները, ցանկանում ենք վերադառնալ զդէպի կեանք: Մեր օրերի յաղթական ընթացքով եկող գիտութիւնը մերժեց իր անցեալը, որ առաւել լաւ կարողանայ պատասխան տալ մեր ժամանակի նիւթական կարիքներին, Մենք ցանկանում ենք, որ գեղարւեսաը, բացասելով իր անցեալը, կազողանար, վերջապէս, պատասխանել մեզ յուզող իտելեկտուալ պահանջներին:

Մեր նորոգւած գիտակցութիւնը թոյլ չէ տալիս մեզ—մարդուն համարել տիեզերական կեանքի կենդրու: Մարդու վիշտը նոյնքան հե-

տաքրքրական է մեր աչքում, որքան է էլեքտրական լամպոչկայի վիշտը:

Սա արդէս ապագայ սմեքենայական որդույատկութիւններն են, երբ մարդը դառնումէ մեքենայ, երբ զգացմունքը նրա մէջ փոխվում է պրոդուկտի, երբ հոգեկան կապերը (որինահոստե) խզում են և ապրում է մամկնոների ինտերֆերենցիայով:

Ֆութուրիստական պատկերների գեղեցկութիւնները ըմբռնելու և հասկանալու համար մարդկային հոգին պիտի մաքրւի, աչքը պիտի ազատի իր ատաւիզմի, ծածկոցից (սկզբնական տիպը) և կուլտուրայից, և միակ կոնտորլը պէտք է համարել վերջապէս բնութիւնը, և ոչ մուշկէյը (թանգարանը):

ՖՈՒԹՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԵՐԱՃԵՑՈՒԹԻՒՆ

Ինչպէս տեսանք, ֆութուրիստական գեղարւեսաի մէջ ստեղծագործութիւնը առաջին տեղն է բռնում, իսկ ստեղծագործութեան համար առաջին պայմանն է պատառութիւնը: Ֆութուրիզմը հակառակ է ակադեմիզմին և անհատական ինիցիատիւայի և անհատական լիարուն արտայայտութեան համար լուծում է այն ամեն կանոն-

ները՝ որոնք այսովէս թէ. այնպէս խոչնդում են հանդիսանում կամ կաշկանդում են ազատ ստեղծագործութեան,

Այստեղից առաջ է գալիս ազատ երաժշշատութիւնը, որ ուղիներ է որոնում այժմ արտայայտելու այնպիսի ձայներ, հնչիւններ, որոնք սովորական մուզիկան անզօր է:

Այսպէս, օրինակ, բնութեան մուզիկան—լոյսը՝ կայծակը, քամու ձայնը, աղմուկը, ջրի ճղփիւնը և դրա հետ նաև քաղաքի ժխորը և մեքենայական աղմուկը, Սրանք բոլորն էլ ինչպէս գիտենք, ազատ են իրենց հնչիւնների ընտրութեան մէջ։ Սոխակը երգում է սքանչելի, բայց ոչ սիայն ժամանակակից երաժշտութեան նօտաներով, այլև բոլոր այն հնչիւններով, որոնք նրան հաճելի են,

Ազատ երաժշտութիւնը կատարւում է նոյն օրէնքներով՝ ինչպէս բնութեան երաժշտութիւնը, ինչպէս և բնութեան բոլոր արւեստը։

Ազատ երաժշտութեան արւեստագէտը, ինչպէս և սոխակը սահմանափակւած չեն թօներով և կիսաթօներով։ Նա օգտառում է և քառորդ թոներով և ութեակներով և այնպիսի երաժշտութեամբ, որը ազատ է իր հնչիւնների ընտրութեան մէջ։

Իբրև սկիզբ այժմ գործադրութեան մէջ է

մտնում քառորդ թոներ, Այդ թոները այժմ դեռ գոյութիւն ունեն հնդկական հին երաժշտութեան մէջ և արևելին գործիքների, նաևմանաւալնդ ճիանուրի գործիքի վրայ։ Այսպիսով ազատ երաժշտութեան առաւելութիւնը կայանում է հետեւեալում։

1) Հնչիւնների նոր և չեղած հակադրութիւնից առաջացած հաճութիւնը,

2) Նոր ներդաշնակութիւն նոր ակորդներով։

3) Նոր դիսոնանաներ նոցա նոր լուծումներով։

4) Նոր մելոդիաներ։

**ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ**

Վերջացնելով մեր փոքրիկ զրբյկը մենք  
կարևոր ենք համարում յիշատակել, որ մենք  
Փութուրիզմի միմիայն մի թեթև էւկեռ-  
նրա մի կմախքը տվինք, հաւատացած լինելով,  
որ այսքանով էլ առայժմ գոնէ մի մասնաւոր գա.  
Պափար տւած կըլինենք Փութուրիզմի—նէօ գե-  
ղարւեստի մասին և դրանով մասամբ վերջ դրած  
կըլինենք գուցէ այն «գրական» ասէ. կոսկերին,  
որով հայ «սեմինարիզմը» և «տիբացւականու-  
թիւնը» բացատրութիւն է տալիս Փութուրիզմին.

— «Ամեն ինչ որ կայսած է կը, ան հասկացիր թարս», «Իտի բանի մէջ բան կայ»: Հայկական կասկածամութիւնը հոս ալ չէ հանգստանում և գլուխ պատռելով անպատճառ ցանկանում է, որ ֆութուրիզմն ալ  $2 \times 2 = 4$  իմի:

Ֆորմուլա, բազմապատկութեան աղիւսակ, ըերականութիւն, ահա թէ ինչ է միշտ պահանջել մեշանականութիւնը, իսկ դրա վրայ էլ աւելացրէք հայ մեշանականութիւնը, որ Խորենացու քերականութիւնից մինչ օրս ձեռք չի վերցնում և կոտրած մի «ըթի» վերծանւած պոչը շատ աւելի թանգ է նրա համար, քան բոլոր զրական և գե-


հարլւեստական հոսանքները, նամանաւանդ, որ  
դրանք հայկական «առողջ» պլոխը չեն մանում  
առանց «քերականութեան» և «բազմապատկու-  
թեան աղիւսակի»:

Դիմումը՝ գաղտնիք է (тайна): Գեղարծութեաւը նա է, որը իր մէջ պարունակում է մի չըպարզւած գաղտնիք—դա նրա հմայքն է, դա է նրա տանող, գրաւող ոյժը, որը տարաբաղդաբար մեր մեջան գրական անդաստանում դեռ անհամականալի է:

Բայց հայ գրական գալիք օրերը բերում են  
իրանց հետ և նոր մշուշներ, որոնց տակից քիչ-  
քիչ բացում են նոր, թէկ աղօտ, երերուն, բայց  
լուսատու ճառագայթներ, որոնց լոյսի տակ մենք  
կամաց կամաց կարդալու ենք արդէն հայկական  
նոր գրականութիւնը և նոր ոհողաւեստու... ।







15 սու

«Ազգային գրադարան»



NL0169191

